



ՀԱՅ ԶՈՐԱԲԱՆԱԿՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ



ատմութիւնը կվկայի, թե արաբական նվաճումի օրերեն ի վեր Եգիպտոսի զինվորական գաղութներուն մեջ հաճախ գործոն մասնակցութիւն ունեցած է հայ տարրը, որ տասնյակ հազարավոր մարտիկներու կողքին տաղանդավոր ռազմագետներ և զորագլուխներ տված է բուրգերու երկրին:

Դեռ Փրկչական 639 թվականին, երբ արաբական զորքերն արաբացեալ Պաղեստինեն ճամբա կելլեր Եգիպտոսը դրաւիլու առաջադրութեամբ, արշավախումբի վարիչներեն մեկն էր Վարդան անուն իսլամացած հայ մը՝ դրոշակիրի աստիճանով, որ ընդհանուր հրամանատար Ամրու Աս զորավարին աջ բազուկը եղավ պատերազմական գործողութիւններուն մեջ: Եվ այս հայորդին ոչ միայն նշանավոր հանդիսացավ իր քաջագործութիւններով, այլ ան, շնորհիվ իր լեզվագիտութեան և հրնարամտութեան, անվերայ մահն մը ազատեց արաբ ընդհանուր հրամանատարը:

Եվրոքիոս կոչված Իպն էլ Պաթրիգ*) կը պատմէ արդարև, թե 640-ին, երբ որ արաբական և բյուզանդական բանակներուն միջև վճռական ճակատամարտը կմղվեր Աղեքսանդրիո առջև, քաղաքի արտարակին վրա կատարված հակահարձակումի մը պահուն արաբական բանակի պարագլուխներեն Ամրու Աս, դրոշակիր Վարդան և Մեսլեմե Պին Մոխալլետ գերի կլինան բյուզանդացիներուն ձեռքը և կառաջնորդվին քաղաքի կա-

*) Մեսլեթ (Մալէթ) քրիստոնյաներուն Աղեքսանդրիո Պատրիարքը՝ Եվրոքիոս, որ արաբական զրական աշխարհին մեջ Իպն էլ Պաթրիգ կոչվի, ապրած է Փրկչական 877 թվականեն մինչև 940: Բժշկական և կրօնական երկերու կարգին ան գրի առած է ընդարձակ տարեգրութիւն մը, որ մեծ վարկ կվայելի և Յանկարին աղբյուր մը կնկատվի պատմագետներու ճատ:

ռավարիչին մոտ: Այս վերջինը, որ շէր ճանչնար ներկայացող գերիներուն ինքնութիւնը, կսկսի նախ հարցաքննել Ամրու Աս զորավարը և տրված պատասխաններեն կը ռահելով, որ պարզ զինվոր մը շէր իր առջև կանգնող անձը՝ կհրամայ մտը կեցող պահակին, որ զայն պիտատե:

Վարդան, որ հունարեն գիտեր, կհասկնար տրված դաժան հրամանը և իր տերը ազատելու անմիջական ճար մը մտածելով, ապտակ մը կիջեցնէ արաբ ընդհանուր հրամանատարի երեսին, առարկելով՝ թե իր պարզ զինվորի հանգամանքով Ամրու իրավունք շուներ տուաջ նետվելու և առաջին խոսողն թլլալու, երբ անդին դիքով և աստիճանով իրմե բարձր երկու հոգիներ կանգնած էին կառավարիչին առջև: Վարդանի անսպասելի ելույթը ուշքի կբերէ դանդաղաշարժ և հաստափոր Մեսլեմեն, որ հասկնալով վարկչանին լռութիւնը՝ վտանգեն փրկվելու համար առասպել մը կհզանա: Ետանդամ խումբին պետը ըլլալու պատրանքը ներշնչող այս արաբը խոսքը կառավարիչին ուղղելով կըսէ, թե իրենք պարզ զինվորներ են և արաբ հրամանատարութեան կողմն իբրև բանքեր զրկված են հավանազ կան հաշտութեան մը մասին բյուզանդացի կառավարիչին տրամադրութիւնը շողափելու համար: Ապա կապելացնէ, թե Օմար խալիֆան հրահանգ պրկած է արաբ ընդհանուր հրամանատարին, որպեսզի վերցուի Աղեքսանդրիո պաշարումը և հաշտութիւն կնքի բյուզանդացիներուն հետ, և թե կառավարիչը եթէ բարեհաճի ազատ արձակել զիրենք, արաբ բարձրաստիճան զինվորականները բաղկացած նոր պատգամավորութիւն մը պիտոն ներկայանա հաշտութեան պայմաններու մասին վերջնական կարգադրութիւններ ընելու համար...:

Վարդանի ապտակը և Մեսլեմեի մեղրա-

ծորան խուսերը կմոլորեցնեն բյուզանդացի կառավարիչը, որ ակնարկված բարձրաստիճան գինվորականները ձեռք ձգելու հեռանկարեն տարվելով՝ ազատ կարծակե երեք գերինները, որոնք անմիջապես կուղղվին դեպի արաբական բանակավայրը: Բայց երբ որ ասոնց անվնաս վերադարձին առիթով ուրախության աղաղակներ կբարձրանան արաբական բանակին, բունմիները այն ատեն միայն կհասկնան, թե խորամանկ վարդանի ծուղակը ինչպիսի՞ արար ընդհանուր հրամանատարը ձեռքե փախցուցած են...

Կարծե հոս հիշել, թե ըստ երևույթին դրոշակիր վարդանեն զատ ուրիշ հայ մարտիկներ ալ մասնակցեր են Եգիպտոս արշավող արաբական զորաբանակին: Իր տեղագրական տեղեկություններում մեջ՝ Մագրիզի *) կհիշե արդարև, թե Եգիպտոսի նվաճումին մասնակցեր են 500 բունմիներ: Ի՞նչ ազդություններու կպատկանեին այս բունմիները և ի՞նչ տոկոս կկազմեր հայ տարրը տրված թվին մեջ, քանի որ արաբ մատենագիրներ հաճախ «բունմի» անունը կուտան հույնի, հայու և դեռ՝ բյուզանդական կայսրության մաս կազմող ուրիշ ժողովուրդներու: Գրթբախտաբար Մագրիզի չի տար մեզի այս թանկագին տեղեկությունը, այնպես որ այսօր հնարավորություն չունինք թվաբանական ճշտությամբ պատասխանելու վերի հարցումներուն: Բայց եթե հաշվի առնենք կարգ մը հատկանշական դեպքեր և տվյալներ, կրնանք առանց հերքվելու վարի 100-են մինչև 150 գնահատել արաբական արշավախումբին մասնակցող հայերուն թիվը:

Հայերու զինվորական ուժը տիրական դիրք ստացավ Եգիպտոսի մեջ Ֆաթիմիներու օրով միայն, երբ Մուսթանսըր խալիֆայի մասնավոր հրավերին վրա հայերն բաղկացած զորաբանակով մը Եգիպտոս եկավ հայազգի Պետր էլ Ճեմալի և վեզիրությունյան բարձր պաշտոնը տտանձնեց 1072-ին**):

Առյուծասիրտ հայը իր ուժեղ բանակին կոթնած անխնա հալածեց և հարվածեց

*) Թագիստոն էլ Մագրիզի ժն դարու մատենագիր մըն է, որ հեղինակած է պատմագրության, բանասիրական և կրոնական մարզեր շոշափող բազմաթիվ գործերու նշանավոր է «Թիթապ էլ Մավաղը վել Իթիպար Յի Ջիր» իլ իթիթաթ վել Ասար» (Գիրք Հորդորանրի և Խորհրդածության Նոր Վարիբու և Հնու-թյուններու Հիշատակության Մասին) անուն իր տեղագրական հսկա գործը, որ ծանոթ է «Եթիթաթ էլ Մագրիզի» անունով:

***) Արաբ պատմագիրներին ոմանք 1073 կամ 1074 ցույց կուտան այս թվականը:

չարագործներն ու խոռվարար տարրերը, մինչև որ հաջողեցավ կարգն ու կանոնը վերահաստատել անկարգության մատնված երկրին մեջ, և վերջ տալ այն ահռելի սովին, որ ամեն օր տասնյակ հազարավոր կյանքեր կհնձեր անմեղ ժողովուրդին:

Բայց ձգենք, որ արաբ մատենագիրը ինք պատմե հայ վեզիրին և իր զորաբանակին ձեռքով կատարված սխրագործությունները.—

«Հիճրեթի 465 (Ք. 1072) թվականին — կգրե Մագրիզի, — ճումատա Ուլալի լրանալուն երկու գիշեր մնացած, շորեքշաբթի երեկո եկավ Պետր և հաջողեցավ ձեռքազրկել պետության բոլոր էմիրները...: Անոր ազդեցությունը զորացավ այս կերպով և հեղինակությունը մեծցավ: Ոսկեճամուկ վերարկու նվիրեց իրեն Մուսթանսըր խալիֆան և անոր հանձնեց սուրի և գրչի վեզիրությունը: Գատիններ, քարոզիչներ և այլ պաշտոնատարներ անոր ձեռքին տակ դրվեցան և անոր պատվանտաններում վրա բարդվեցավ «Բանակներու Հրամանատար, Մահմեդական Գատիններու Նունամատար և Հավատացյալներու Քարոզիչներուն Առաջնորդ» տիտղոսը:

«Ան շարագործները հետապնդեց և մեկ հատ իսկ չձգելով մահացուց: Մըսրի ավազանիներեն, գատիններեն և վեզիրներեն շատերը մեռցուց: Ապա գնաց Ստորին Եգիպտոս, հոն դտնվող Լավաթիներ*) անխնա ջարդեց, անոնց փնչքերը գրավեց. խոռվարարները հալածեց և զանազան մահացումներով ոչնչացուց: Ապա անցավ արևելյան ցամաքը և սպաննեց անհամար շարագործներ: Հետո իջավ Աղեքսանդրիա, երբ հոն խմբակ մը ապստամբած էր իր էլ Ալիհատ**) որդիույն հետ: Հիճրեթի 477 (Ք. 1084) թվականի Մուհամմադ ամսունն քանի մը օր պաշարեց քաղաքը, մինչև որ բունի գրավեց զայն, բնակիչներեն շատերը սպաննեց և բունագրավուած դըրբատով Աթթարիների մղկիթը***) շինեց: Ապա բավեց դեպի վեզիրն Եգիպտոս, պատերազմեցավ Ճուհենա և Մաալպա կոչված արաբ ցեղախումբերուն դեմ, որոնց մեծ մասը ոչնչացուց: Անգնահատելիորեն առաստ

*) Արաբ ցեղախումբի մը անունն է:
 **) Թաղրիպիրտի կվլայե, թե Պետր էլ Ճեմալի այս անարժան զավակը, որ զենք վերցուց իր հորը դեմ, մահվան պատիժին ենթարկուած է հորը ձեռք ինչպիսի կերպ:
 ***) Աղեքսանդրիո թաղերին մեկուն անունն է: Ակնարկված մղկիթը կանգուն կմնա մինչև այսօր:

հարստություն մը ձեռք ձգեց և անով բարելավեց շրջանին խանութարված կացությունը...

«Պետք էլ ձեռնարկի թագավորներու իշխանությունը ունեցավ եզրպտոսի մեջ, այնպես որ անոր առջև Մուսթանսըր Կալիֆան հեղինակություն չունեի: Ան Կնքնագրովս վարեց գործերը և ամենայն կերպով կանոնավորեց: Խիստ պատկառաղու, մեծապես հարգված և ահարկու՝ ան Եզրպտոսի մեջ այնքան մարդ սպաննեց, որուն համբանքը Արարիչը միայն կրնա գիտնալ: Արդարև, Տամիթի, Աղեքսանդրիո, Ղարպիյի, Շարքիյի, Վերին Եզրպտոսի քաղաքներուն, Ասուանի, Գահիրեի և Մըսոի մեջ սպաննուածներն ըտքս ան Պահէրա նահանգի ժողովուրդն միայն մոտավորապես 20 հազար հոգի մահացուց: Այսու հանդերձ, ան խաղաղեցուց, շենցուց և քարեկարգեց երկիրը, որ ավրուած և քանդված էր տեղացի շարագործներուն ձեռքով...»

Հայկական գորաբանակը իր գոյությունը պահեց Պետք էլ ձեռնարկի հաջողող հայ վեզիրներու օրով, կարևոր տարր մը կազմեց արաբներին, մաղղբալիներն և սևամորթներն բաղկացած եզրպտոսի քանակներու կողքին և մերթ հաջող ու երբեմն ալ անհաջող ընդհարումներ ունեցավ խաչակիրներուն հետ: Հայկական զորաբանակը մեծ փայլ տաացավ և Կիլիկիո կողմերն բերված թարմ ուժերով մեծապես զորացավ եզրպտոսի հայ վեզիրներն Վահրամ Պահլավունիի օրով*): Եթե հավատանք Հաֆըզ Կալիֆայի կողմն Սիկիլիո այն ատենուան քրիստոնյա թագավորին ուղղված պաշտոնագրի մը վկայության, Վահրամ հաջողած է 20 հազարի հասցնել Եզրպտոսի հայկական հեծելազորքն ու հետևակազորքը կազմող զինվորներուն թիվը: Արդարև պատմական տեսակետն մեծ արժեք ներկայացնող այս ընդարձակ վավերագրին մեջ, որուն հարագատ

պատճենը կուտա մեզի, Գալգաշանտի*), Հաֆըզ կիտինիլահ Կալիֆան ի մեջ այլոց հետևյալը կգրե Վահրամի ձեռքով կազմված հայ զորաբանակի մասին.

«...իր (իմա՝ Վահրամ Պահլավունիի) կողմն ըրկված դադունի թղթակցություններով և ետքնյ երևան հանված հայերեն նամակներով Վահրամ կանչել տվավ իր ընտանիքին ու ազգականները, իր ազգակիցներն ու ցեղակիցները: Ասոնք եկան հետզհետե, մինչև որ ձիավոր և հետևակ 20 հազար հոգի հավաքվեցավ, մեզն ըլլալով իր երկու եղբորոգիները**») և իր գերդաստանն դեռ ուրիշներ...»

Հայուն անունը պանծացնող զինվորական այս ուժեղ կազմը առաջին հարվածը ստացավ 1137-ին, երբ Վահրամի վեզիրության վերջին օրերուն հակահայ հալածանք մը ծայր տվավ Եզրպտոսի մեջ՝ Հաֆըզ Կալիֆայի իսկ դրդամով, հալածանք մը, որուն հետևանքով հայ զինվորներն շատեր հեռացան Եզրպտոսին և ապաստան գտան Կիլիկիո կողմերը: Հայկական տկառացած բանակին վերջնական հաշվհարդարը տեղի ունեցավ սուլթան Սալահատինի օրով, երբ Ցաթիմիներու իշխանության անկումն ետք Այեուպիներու իշխանությունը հաստատվեցավ Եզրպտոսի մեջ: Կարգ մը քաղաքական դրդապատճաններով, որոնց հիշատակությունը երկար պիտի ըլլար, Սալահատին, եզրպտոսիան ուրիշ բանակներու կարգին, ցրեց նաև հայկականը և այս պարագան Պաղտատի Կալիֆային հաղորդեց ընդարձակ տեղեկագրով մը, որուն պատճեն կգտնենք նույնպես Գալգաշանտի գործին մեջ:

Այս համատոտ հողվածին մեջ մենք շոշափեցինք այն ժամանակաշրջանը միայն, որ կհասնի մինչև Ցաթիմիներու անկումը, մինչդեռ հայ մարտիկը Եզրպտոսի զինվորական ասպարեզին մեջ խիստ ուշագրավ դեր կատարած է նաև Այեուպիներու, Մեմլուքներու և օսմանյան ստրապանության շրջաններուն: Բայց այս մասին հաջորդ հոդվածով:

*) Վահրամ Պահլավունի, զոր Պեհրամ էլ էրմենի կողմն արաբ մահնագիրներ, քնտրդին է Գրիգոր Բ Վկայաներ կաթողիկոսին և հորեղբայր Ներսես Շնորհալիի: Ան Եզրպտոսի վեզիրության պաշտոնը ձեռք ձգեց 1135-ին՝ ղեկքի ուժով, բայց չուղևով հետևածք տալ իր քրիստոնեական հավատքը դրանալու առաջարկներուն, ավելի քան տարի մը՝ նրկրին վարչական իշխանությունը վարելի ետք ստիպվեցավ ձգել պաշտոնը:

*) Շիհապետին Գալգաշանտի ժն դարու մատենագիրն մըն է: Ունի Սորհ էլ Աաշա (Հավուլբին Արշալույսը) անուն հուպակապ գործ մը, որու մեջ պատմական տեղեկություններու կարգին հեղինակը հավաքած է արժեքավոր վավերագրներու հարագատ պատճեններ:

***) Ակնարկություն կըն Ահլավունի տոհմն Վասիլի և Շահալի, որոնք Եզրպտոս զալով պահ մը պետական պաշտոն վարած էին Վահրամի օրով: